

11.12.2007

Մի շարք զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, մեկնաբանելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Աբրամ Բախչագուլյանի՝ ս/թ դեկտեմբերի 7-ին «Տեսակետ» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ արտահայտած մտքերը, լրատվություն են տարածել, որ ԿԸՀ քարտուղարը իբր հայտարարել է, թե «2008 թ-ի փետրվարի 19-ին կայանալիք նախագահական ընտրություններին երկարաժամկետ օտարերկրյա դիտորդական առաքելություններ չեն հետևելու»:

Այս կապակցությամբ տեղեկացվում է, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարի ասածը կամայական վերլուծության է ենթարկվել: ՀՀ ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն միջազգային դիտորդական առաքելություն հրավիրելու իրավունք ունեն Հանրապետության Նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ կառավարությունը և կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Աբրամ Բախչագուլյանի ասածը վերաբերել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից միջազգային դիտորդական առաքելություն հրավիրելուն: ԿԸՀ-ն, այո՛, հրավիրելու է միայն կարճաժամկետ դիտորդների, ինչը չի ենթադրում, որ նախագահական ընտրություններում չեն լինելու միջազգային երկարաժամկետ դիտորդական առաքելություններ:

*ԿԸՀ մամուլի քարտուղար  
Տաթև Օհանյան*